SUMMARY

The relationship between the institutions of power and society in a modern democratic state are diverse. A certain part of these relations are regulated by the current national legislation. According to the our sociological studies of last ten years, these relationships were at the stage of initial development and, as a rule, bore the imprint of the previous authoritarian-command style of management. In the context of the coronovirus pandemic and the emergency conditions introduced by the Armenian Government in the country on March 16, 2020, these relation were under the additional restrictions, that practically prohibit all manifestations of social activity and civic initiative. Thus, in the conditions of the unprecedented spread of COVID-19 infection in Armenia, the struggle of the state and society to overcome the pandemic, at the same time means the struggle for the return of the civil liberties and constitutional rights of the socially active part of society has lost.

Key words. Authorities, Society, Pandemia, Extreme conditions.

«ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԵՆՍԱԿԵՐՊԻ» ՈՐՈՇ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՄՊԵԿՏՆԵՐԸ

Ներսես Քոչարյան

Սոցիոլոգիայի մագիստրոս

Ժամանակակից հայ հասարակությանը բնորոշ է արագացող փոփոխություններ իր հոգևոր-քաղաքակրթական կյանքի որակը բաղկացնող բոլոր ոլորտներում՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական, կրթական…, և նույնիսկ ամուսնական հարաբերություններում: Օբյեկտիվ փոփոխությունները հանգեցնում են նաև անձնական մակարդակում նշանակալի փոփոխությունների արժեքային համակարգում, վարքաձևում, կենցաղում: Քրիստոնեությունը հնուց ի վեր և առ այսօր եղել է հայ ժողովրդի կենսակերպի ու կենսագործունեության անբաժանելի բաղկացուցիչը: Հայ մարդու համար քրիստոնեությունը հանդես է գալիս որպես կյանքի, գործունեության, մարդկային հարաբերությունների իմաստավորման հարացույց:

Քրիստոնեության ընդունումը արմատական ու հիմնարար հեղաշրջում է առաջացրել մարդկանց և հատկապես հայերի մտքերում, հոգիներում, կենսակերպում, որի նշանակալիությունն առ այսօր քննարկումների առիթ է հանդիսանում գիտական ու

առօրեական շրջանակներում[1]: Քրիստոնեական կենսակերպի դրսևորումների վերաբերյալ և հատկապես՝ իր սկզբնակայացման ժամանակաշրջանում առկա են սակավ փաստաթղթային հավաստագրեր, հատկապես եթե հաշվի առնենք, որ պատմիչները, աշխարհագետները, դիվանագետները հիմնականում գերադասել են նկարագրել զորավարների, կայսրերի, իշխանների կյանքը և գործունեությունը, պատերազմների ընթացքը, առևտրի արդյունքները: Եվ պատմված ավանդությունում հայտնացուցվել է և ապա՝ մարդկանց ազգերի ու ողջ մարդկության ժամանակընթաց կյանքում կատարումի է բերվել դրանց նշանակալիությունը՝ և՛ նախնյաց ազատակամ ու առաքինորեն բարենշանակ ընտրությամբ ու ջանքով ձեռքբերումների ու առավելությունների, և՛, ընդհակառակը, սոսկ ինքնակամ, արատավոր ու չարանշանակ կորուստների ու նվազությունների ներգործուն ներկայակցությունը իրենց սերունդների կյանքում[2]:

«Քրիստոնեական կենսակերպ» երևույթի դրսևորումների քննողաբար վերլուծությանը հարկ է նախադրել մասնագիտական գրականությունում առկա «կենսակերպ» հասկացության ընդհանուր բնութագրի բացորոշումը:

Ըստ Միխայլովայի, «կենսակերպը՝ որպես մարդկանց կյանքի ընդհանրական գծերը բնորոշող հասկացություն, հնարավորություն է ընձեռում բացահայտել նաև հասարակության համար ընդհանուր բնութագրեր»[3]: Մարդու, ընտանիքի, սոցիալական, ազգային խմբի ***կենսակերպը*** (լատիներեն modus vivendi) իրենում բովանդակելով անհատական և խմբային կենսագործունեության միջոցներն ու ձևերը, սահմանվում է որպես կոնկրետ պատմական ժամանակաշրջանի

---

[1] Տե՛ս **Илтис А . С.,** Секулярное государство и установление секулярной идеологии в праве и общественно-государственной политике // Вестник ПСТГУ I: Богословие. Философия, 2013, Вып. 4 (48). С. 137-150, **Красильникова Н. А.,** Христианские ценности и исследование американского образа жизни // Политическая лингвистика 4 (46), 2013. С.272-273, **Пантелеев А. Д.,** Элементы демократии в раннехристианских общинах: споры об организации общины // Вестник Санкт-петербургского университета, Сер. 2. 2009. Вып. 3.С. 82-85:

[2] Մանրամասն տե՛ս **Քոչարյան Ռ.,** Պատմությունը և Հերմենևտիկան. Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, Փրինթինֆո, Եր., 2016:

[3] **Михайлова Л.И.**, Образ жизни человека как предметное поле социологического осмысления, Труды СГА. Выпуск 2 (февраль). Юриспруденция. Образование. Психология. Экономика. Социология. Философия, Издательство СГУ, М., 2011.С. 113.

սոցիալ-տնտեսական հարաբերություններով պայմանավորված ընդհանրացված (типичный) գործելաոճ՝ մտածելակերպ, վարքաձև, հաղորդակցություն[4]: «Կենսակերպ» կատեգորիան լայն տարածում էր ստացել խորհրդային տարիներին սոցիոլոգիական, տնտեսագիտական, պատմական և այլ գիտությունների ուսումնասիրություններում և կոչված էր բացահայտել «սոցիալիստական» կյանքի որակը, մակարդակը, ոճը[5]:

Վերջին տարիներին վերստին նկատվում է «կենսակերպ» հասկցության նկատմամբ ուշադրության աճ: Ռուսաստանում իրականացվել են մի շարք էմպիրիկ սոցիոլոգիական հետազոտություններ բացահայտելու ռուս ֆերմերների, փոքր և միջին գործարարների, քաղաքի բնակչության կենսակերպի առանձնահատկությունները, ընդհանրությունները, ներքին անհամատեղելիությունները[6]: Ըստ հետազոտողների, այդ ամենը հնարավորություն է ընձեռում անդրադառնալ ժամանակակից հասարակության փոխակերպման և զարգացման վրա ազդող նշանակալի գործոնների:

Մասնագիտական գրականությունում առկա են նաև կենսակերպի տեսական-մեթոդաբանական վերլուծություններ: Օրինակ, Ա. Վոզմիտելի և Գ. Օսադչայայի կողմից իրականացվել է «կենսակերպ» (“образ жизни”) հասկացության բազմակողմանի մեթոդաբանական վերլուծություն՝ հիմնվելով «կենսակերպ», «կենսաձև», «կենսաոճ» համակարգային հասկացությունների եռամիասնության վրա: Ըստ նրանց, կենսակերպը սահմանվում է որպես «սոցիալական գոյի, մարդկանց համատեղ գործունեության կայուն ձևեր, որոնք բնորոշ են պատմականորեն կոնկրետ սոցիալական հարաբերություններին և ձևավորվում են ընդհանրական նորմերի և արժեքների համապատասխանությամբ»[7]: Կենսակերպը հնարավորություն է

---

[4] Տե՛ս նույն տեղում

[5] Մանրամասն տե՛ս Социалистический образ жизни. М., 1984:

[6] Ռուսական Դաշնությունում այդ ուղղությամբ իրականացված սոցիոլոգիական հետազոտության մասին մանրամասն տե՛ս **Возьмитель А. А.. Карпов А. Л.**, Становление образа жизни российского фермерства. М., 1994; **Руденко Л.Д.,** Социологическое исследование городского образа жизни (на примере г. Ярославля)// Вестник социально-политических наук, ЯрГУ, 2015, № 14. С. 35-48:

[7] **Возьмитель А. А., Осадчая Г. И.**, Образ жизни: теоретико-методологические основы анализа // Социологические исследования, №8, 2009. С. 62.

ընձեռում տարբերակել մի քաղաքակրթությունը մյուսից, ամերիկյանը՝ ռուսականից, մուսուլմանա-կանը՝ քրիստոնեականից և այլն: Կենսաձևը ներկայացվում է որպես կենսագործունեության կազմակերպման եղանակ, որում ընդգրկված են ինչպես սոցիալական միջավայրի օբյեկտիվ պայմանները, այնպես էլ ներքին դրդապատճառներն ու հնարավորությունները (որպես սոցիալական իրավիճակ նկատի ունենալով սոցիալական միջավայրը և գործունեության ուղղվածությունը՝ քաղաքային և գյուղական, ֆերմերային, գործարարական և այլն):

«Կենսառճը» բնորոշվում է որպես սոցիալ-հոգեբանական եզրույթ, որն արտահայտում է մարդկանց որոշակի տիպի վարքագիծ՝ անհատապես յուրացված կամ ընտրված, կայունորեն վերարտադրելով հաղորդակցության, առօրյա կյանքի, բարքերի, սովորությունների, հակումների և այլնի առանձնահատկությունները, բացահայտելով մարդկանց հոգևոր աշխարհի ինքնատիպությունը «կեցության արտաքին ձևերի» միջոցով[8]: Հոգեբանահեն վերլուծություններում մարդու կենսագործունեության ոլորտը հաճախ քննարկվում է «կենսառճ» և «կենսակերպ» հասկացությունների փոխկապակցվածության միջոցով, որտեղ «կենսառճը» հանդես է գալիս որպես կյանքի ընթացքում առաջացող հիմնախնդիրների լուծման եղանակ[9]:

Փոքր ի շատե քրիստոնեական կենսակերպի վերաբերկալ հստակ տեղեկությունները պահպանվել են Հռոմեական Կայսրությունում ապրող վաղ քրիստոնյաների համայնքների մասին: «Վաղ քրիստոնեաների համար, - ինչպես նշում է Ա.-Գ. Ամանը, - բնորոշ կարելի է համարել իրենց կենսակերպի երկբնույթ լինելը, մի կողմից՝ նրանք շարունակում են մնալ այս «երկրային» կյանքի մասն ու բաժինը, ընդգրկված լինելով հասարակական աշխատանքի բաժանման, առօրեական գործունեության կազմակերպման մեջ, մյուս կողմից՝ յուրաքանչյուր այդ գործողությունում տեսնելով «երկնային»

---

[8] Տե՛ս **Возьмитель А. А.,** Концептуальные основы социологии образа жизни // Вестник института социологии, № 4, 2017. С. 14-44.

[9] Տե՛ս **Мельникова Н. Н.**, Образ жизни и его адаптивная функция // Вестник ЮУрГУ, № 5, Серия «Психология» , вып. 4, 2009. С. 42.

իմաստ…»[10]: Նրանք ապրում էին մի քանի մեկուսացված խմբերով: Պողոս առաքյալը մի քանի անգամ իր նամակներում նշել է տեղի բնակչության թշնամական վերաբերմունքը քրիստոնեական համայնքների նկատմամբ[11]: Ո՞րն էր դրա պատճառը:

Ըստ երևույթին, կարևոր գործոն էր բոլոր ժամանակներին բնորոշ քսենոֆոբիան, տեղի բնակչությանը բնավ դուր չեն գալիս անծանոթ մարդիկ: Հատկապես, եթե դրանք զգալիորեն տարբերվում են հագուստով, խոսելաոճով կամ սովորույթներով: Վաղ քրիստոնեական համայնքները կտրուկ տարբերվում էին հռոմեացի տեղաբնակ հեթանոս բնակչությունից առնվազն երկու արտաքին շատ նկատելի հատկություններով: Նախ՝ վաղ քրիստոնյաները խուսափում էին մասնակցել հեթանոսական տոնակատարություններին: Կայսրության ողջ ընթացքում հռոմեացիներն ապրում էին իրենց ավանդական տոների չափազանց մեծ զվարճանքի ու վարվելակերպի և նույնիսկ ավելի հոյակապ տոների սպասման ակնկալիքով, որոնք նվիրված էին հռոմեական կայսրերին: Քրիստոնյաները, մերժելով բոլոր հեթանոսական հավատալիքները և անտեսելով աշխարհային գոյության հաճույքները, անընդունելի համարեցին իրենց մասնակցությունը հեթանոսական տոնակատարություններին:

Քրիստոնյաների մեկ այլ պահվածքն առավելի տագնապալի էր տեղի բնակչության համար: Վաղ քրիստոնյաները սովորություն ունեին գիշերը միասին աղոթելու: Տեղի բնակիչները քրիստոնեական համայնքների անդամների ոչ շփվող պահվածքով իրենց անխռովությամբ, երբ նկատեցին քրիստոնյաների գաղտնի հավաքները, մտածում էին, թե ո՞րն էր նպատակն այս խորհրդավոր հանդիպումների համար և շատերը հակված էին ենթադրել, որ քրիստոնյաները գաղտնի հավաքվում են գիշերը՝ հարձակվելու քնած անպաշտպան մարդկանց վրա: Այսպիսով, կարող էր ձևավորվել տեղի բնակչության թշնամական վերաբերմունք վաղ քրիստոնեական համայնքների լիովին խաղաղ և անմեղ ներկայացուցիչների նկատմամբ:

---

[10] Տե՛ս **Аман А. Г.**, Повседневная жизнь первых христиан 95-197гг., М., Молодая гвардия, Полимпест, 2003. С. 17.

[11] Մանրամասն տե՛ս Պողոս Առաքյալի նամակները … // Աստվածաշունչ Մատյան, Սր. Էջմիածին, 2017, էջ 1367-1449:

Քրիստոնեության բարձր բարոյական արժեքները հիմք էին հանդիսա-նում անհատական քրիստոնեա-հոգևոր կյանքի, ընդհանուր հասարա-կական հարաբերությունների քաղաքակրթական որակի բարելավման ու բարեկարգության, ինչի օրինակը կարող ենք տեսնել հայոց պատմության «ոսկե» դարի պատմիչների աշխատություններում և «Վարք Սրբոց»-ում: Քրիստոնեության բարոյահոգևոր արժեքները մարդկային փոխգործու-նեության համաբովանդակ հոգևոր-քաղաքակրթական որակի հետ մեկտեղ՝ մասնահատուկ առավելացրել են նաև հասարա-կության տկարացյալ անդամների նկատմամբ բարեգործության աճը, ընտանիքում կնոջ և երեխաների նկատմամբ քրիստոնեական սիրով ու հոգածությամբ վերաբերմունքի ուսուցանությունը: Մարդկության ու նաև հայոց ինքնությունում, կյանքում ու մշակույթում քրիստոնեական վարդապետությունը՝ ուսմունքն ու ուսուցանությունն արդյունավորվել է մարդկային ներաշխարհում, ներքինից դեպի արտաքին շարժում և ապա հենց արտաքին կենսագոյությունում՝ հոգենշանակ, բարոյանշանակ ու կենսանշանակ իր բնույթով ու բովանդակությամբ: Եվ նկատելի է, որ քրիստոնեական իմաստությունը մարդկության ու նաև հայոց կյանքում կենսագործվել է, անշուշտ, ոչ միշտ դյուրին ու ինքնաբերաբար, անսայթաք ու անկորուստ, այլև երբեմն առճակատման ու մարդկայնորեն ողբերգական ուղիներով, քանզի դժվարին ու տառապանքով լի է մարդկային ինքնության ու կյանքի վերափոխությունը, և հենց անհրաժեշտ են մեծաչափ սեր, ճիգ ու ջանադրություն մարդու **բնության** հատկությունների՝ տաքարյուն ու հուզումնալից, սառնարյուն ու անտարբեր, **բնավորության** արմատականացած ու սովորություն դարձած գծերի՝ հպարտամտության, ցասկոտության… բանական կերպափոխության համար:

Քրիստոնեական կենսակերպը պայմանականորեն կարելի է բաժանել երեք մասի՝ անձնական, ընտանեկան, հասարակական: Քրիստոնեության ընդունման և տարածման ժամանակաշրջանում այն բնորոշվել է անկեղծ սիրո և հոգատարության վառ դրսևորումներով, աստ՝ նկատի ունենալով ոչ միայն Երուսաղեմում ձևավորված առաջին քրիստոնեական համայնքներում առկա կենցաղը՝ համատեղ և անհատական մշտական աղոթքով՝ վերինը խորհող մտագործունեութ-յամբ, ինչը հնարավորություն էր տալիս պահպանել

կապը Աստծո հետ ամեն պահին՝ հյուրասիրության, համատեղ «սիրո ճաշերի», համայնքի անդամ հիվանդների ու տկարների կամ օտարականների նկատմամբ առանձնահատուկ հոգատարության զուգորդմամբ, այլև հասարակական կյանքի բազմատեսակ ոլորտներում:

Քրիստոնեությունը հայերի համար, կարծես, ի վերուստ տրված շնորհ լինի, և մենք այն ընկալում ենք, որպես «այդպես էլ պետք է լինի», համարվում է, որ քրիստոնեական կենսակերպը դարձել է մեր ժողովրդի «միսն ու արյունը», սակայն որքանո՞վ է այն գիտակցված, և որքանո՞վ ենք մենք այսօր գործում ըստ սուրբ հայրերի քարոզներում ու գրքերում բովանդակվող և մեր նախնիներից ավանդված իմաստության:

Անտիկ աշխարհի մայրամուտին ձևավորվող քրիստոնեությունը մի կրոնական համակարգ էր, որը I-IIդդ. արագորեն տարածվում էր Մերձավոր Արևելքի տարածաշրջանի պետություններում: Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը լի է մ.թ. I դարում քրիստոնյաների հալածանքների մասին եղած ավանդությունների քննարկումներով[12]:

Այժմ նպատակային ենք համարում անդրադառնալ վաղ շրջանի քրիստոնեական համայնքների սոցիալ-բարոյական սկզբունքներին: Երկրորդ դարի հայտնի աստվածաբան Տերտուլիանոսը (160-225) նկարագրելով իր ժամանակի քրիստոնեաների կենսակերպը՝ հիացմունքով բացականչել է. «Տեսեք թե ինչպիսի սիրով են նրանք վերաբերվում միմյանց:» Ըստ Տերտուլիանոսի վկայության, իր դարաշրջանի քրիստոնյաները հետևալ կերպ էին ինքնագիտակցում ու բնորոշում իրենց կենսակերպը. «Մենք մեկ միասնական մարմին ենք, հյուսված մեր կրոնով, ամուր ու միասնական կարգապահությամբ, փրկության հույսի կապով: ... Մենք նաև աղոթում ենք կայսրի, նրա նախարարների և վարչակազմի համար, հանուն աշխարհի բարեկեցության խաղաղության պահպանման, վերջնական ավարտի հետաձգման համար: Մենք հավաքվում ենք մեր սուրբ գրերը ընթերցելու համար ... և սուրբ խոսքով մենք սնում ենք մեր հավատը, ուժ ենք հաղորդում մեր հույսերին, ամրապնդում ենք

[12] Մանրամասն տե՛ս **Евсевий Кейсарийский**, Церковная история, Научное издание, СПб., Издательство Олега Абышко, 2013.

մեր համոզմունքը և պահպանելով Աստծո պատվիրանները մենք հաստատում ենք բարի սովորություններ»[13]:

Տերտուլիանոսի հաջորդող վկայությունից մենք տեղեկանում ենք, որ քրիստոնեական համայնքում միջանձնային հարաբերությունները միշտ չեն եղել անվրդով ու եղբայրական: Տերտուլիանոսի վկայության տեքստն այդ կապակցությամբ հաղորդում է հետևյալը. «Միևնույն ժամանակ մենք համոզում ու հորդորում ենք, նախատում ենք ու ենթարկում պարսավանքի: Որովհետև դատելը մեր միջև կատարվում է մեծ լրջությամբ, ինչպես որ վայել է բոլոր նրանց, ովքեր համոզված են, որ գտնվում են Աստծո աչքի առջև. դրա առավել նկատելի օրինակն է, երբ որևէ մեկն այնպես ծանր է մեղանչում, որ մեզանից պահանջվում է անջատել նրան մեր աղոթքներից և մեր համայնքի բոլոր սուրբ արարողություններից»[14]:

Տերտուլիանոսի վկայություններից պարզվում է, որ վաղ շրջանի համայնքներում դեռևս չէին հաստավել համայնքի պաշտոնական ղեկավարներ: Որոշ առումով կարելի է եզրակացնել, որ համայնքներում գործում էր կոլեկտիվ ղեկավարության եղանակը. «Մեր փորձված ավագներն են ուղղորդում մեզ, այդ պատվին արժանանալով ոչ թե գումարով, այլ իրենց հաստատված վարքագծով: Անթույլատրելի է առևտուր և վաճառք Աստծո հետ կապված հարցերում:»[15]

Իհարկե, համայնքը պետք է հոգար նաև իր առօրյա նյութական հոգսերը: Այդ նպատակով համայնքի յուրաքանչյուր անդամ կատարում է փոքրաչափ մուծումներ, ըստ իր բարի ցանկության և իր հնարավորությունների չափով, առանց որևէ պարտադրման, միայն սեփական բարի կամքով: Տերտուլիանոսի վկայությունում շեշտվում է, որ այդ միջոցները չեն ծախսվում տոնակատարությունների համար կամ ճաշատներում (eating-houses), այլ ոգտագործվում են որպես օգնություն չքավորների և թաղումներին, որբ կամ աղքատ տղաներին ու աղջիկներին, զառամյալներին, նավաբեկությունից փրկվածներին, և այլն:

---

[13]Մանրամասն տե՛ս **Tertullian**, Apology, https://www.loebclassics.com/view/tertullian-apology/1931/pb_LCL250.ix.xml,

[14] Նույն տեղում:

[15] Նույն տեղում;

Վաղ քրիստոնեական համայնքների անդամները համոզված էին, որ իրենց կենսակերպում «գլխավորը մեր մարդասիրական ու ազնվաբարո գործերն են, որոնք շատերի կարծիքով մեր առավել առանձնահատուկ կողմն է: Նրանք գոհությամբ նշել են, օտարների խոսքն իրենց մասին. «տեսեք, որքան են նրանք սիրում միմյանց», «տեսեք, նրանք պատրաստ են իրենց կյանքը զոհաբերել իրար համար»[16]:

Ժամանակակից հետազոտող Ռոդնի Ստարկն իր «Քրիստոնեության վերելքը» մենագրությունն ամփոփում է հետևյալ տողերով. «Քրիստոնեությունը ծառայեց որպես վերակենդանացման շարժում ընդդեմ հունա-հռոմեական քաղաքներում տիրող աղքատությանը, քաոսին, վախի ու սարսափի մթնոլորտին, կյանքի դաժանությանը: ... Քրիստոնեությունը վերակենդանացրեց հունա-հռոմեական քաղաքների կյանքը ներմուծելով սոցիալական հարաբերությունների նոր նորմեր ու ձևեր, որոնք հնարավորություն են տալիս կարգավորել շատ խնդիրներ: Անտուն և աղքատ մարդկանցով լցված քաղաքներին քրիստոնեությունն առաջարկեց բարեգործություն և հույս: Իսկ նորաբնակներով և օտարներով լցված քաղաքներին քրիստոնեությունն առաջարկեց միասնական ապրելակերպի անմիջական հիմք: Որբերով և այրիներով լցված քաղաքներին քրիստոնեությունն առաջարկեց ընտանեական կյանքի նոր և ընդգրկուն իմաստ: Էթնիկ սուր ընդհարումներով հեղեղված քաղաքներին քրիստոնեությունը առաջարկեց սոցիալական միասնության նոր հիմք: Համաճարակներից, հրդեհներից ու երկրաշարժերից տառապող քաղաքներին քրիստոնեությունն առաջարկեց խնամքի նոր արդյունավետ ծառայություններ: ... Քրիստոնեությունն առաջադրեց ոչ թե պարզապես քաղաքային նոր շարժում, այլ կենսակերպի նոր մշակույթ, որն ի զորու էր հունա-հռոմեական քաղաքների կյանքը դարձնել տանելի»[17] :

---

[16] Նույն տեղում

[17] Տե՛ս **Мизун Ю.Г., Мизун Ю.В.**, Апостол Павел и тайны первых христиан, М., 1999. С. 298-304.

Երկրորդ դարի աղբյուրներում[18] նշվում են նաև վաղ քրիստոնեական համայնքների կենսակերպի վերաբերյալ դրվատանքի մի շարք խորիմաստ ձևակերպումներ.

1. Դուք կարող եք մեզ սպանել, բայց չեք կարող մեզ վնասել:

2. Նրանք մարմնավոր էակներ են, բայց չեն ապրում մարմնի պահանջներին հետևելով:

3. Նրանք ապրում են երկրի վրա, բայց դրախտի քաղաքացիներ են:

4. Նրանք ապրում են հասարակությունում ընդունված օրենքների համաձայն, բայց իրենց կյանքով գերազանցում են այդ օրենքները:

5. Նրանք սիրում են բոլոր մարդկանց, բայց հետապնդվում են բոլորի կողմից:

6. Նրանք աղքատ են, բայց շատերին դարձնում են հարուստ:

7. Աշխարհի համար նրանք նույն դերն են կատարում, որը հոգին կատարում մարմնի համար:

Այս խորիմաստ աֆորիզմները, որ ակնառու սոցիալ-բարոյական երանգ են կրում, որոշակի մեկնութուն են պահանջում, որպեսզի ավելի ճշգրտորեն ու բազմակողմանիորեն ըմբռնենք վաղ շրջանի քրիստոնեական համայնքների կենսակերպը և սոցիալ-բարոյական մթնոլորտը: Փորձենք մեր ուժերի սահմաններում մեկնենք դրանք ու համապատասխանաբար ճշգրտենք մեր պատկերացումները, հաջորդաբար դիտարկելով վերոբերյալ աֆորիզմները:

Առաջին աֆորիզմում հայտարարվում է. «***Դուք կարող եք մեզ սպանել, բայց չեք կարող մեզ վնասել:***» Այն մեզ հաղորդում է պատկերավոր խոսքով վաղ շրջանի քրիստոնեության հերոսական շրջանի մթնոլորտը, երբ յուրաքանչյուր համայնք ու համայնքի անդամ գտնվում էր հետապնդման և նույնիսկ մահապատժի վտանգի ներքո: Լինելով սփռված Միջերկրական ծովի առափնյա երկրների ողջ տարածքով, վաղ շրջանի քրիստոնեական համայնքները ոչ միայն հետապնդվում էին հունա-հռոմեական իշխանությունների կողմից, այլ նաև մշտապես ենթակա էին երկրների բնակչության թշնամական վերաբերմունքին: Այդպիսի ծանր ու դաժան պայմաններում վաղ

[18]**Stark R.,** The Rise of Christianity, How the Obscure, Marginal Jesus Movement Became the Dominant Religious Force in the Western World in a Few Centuries, Priston Univercity Press, 1996, p. 161.

քրիստոնեական համայնքներին հոգևոր ուժ ու տոկունություն էր հաղորդում նրանց խորն ու անկոտրում հավատն ու նվիրվածությունը Քրիստոսի խոսքին ու գործին: Ենթարկվելով խոշտանգումների ու սպանությունների, նրանք գիտակցում էին, որ դրանք չեն կարող վնասել իրենց հոգուն և փրկության վեհ նպատակին: Լեռան քարոզում Հիսուս Քրիստոսը հայտարարել է. «Երանի է ձեզ, երբ նախատեն ու հալածեն և իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝ սուտ ասեն: Ցնծացե'ք և ուրախացե'ք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է, քանի որ այսպես հալածեցին մարգարեներին, որոնք ձեզնից առաջ են եղել» (Մատթեոս 4, 5):

Երկրորդ աֆորիզմում ասված է. ***«Նրանք մարմնավոր էակներ են, բայց չեն ապրում մարմնի պահանջներին հետևելով»:*** Սովորական մարդկանց համար մարմնավոր պահանջմունքներն են թելադրում իրենց կենսակերպի ու կենսագործունեության հիմնական գծերը: Երբ որոշ նյութապաշտներ կոչ են անում՝ «Ապրիր այսօր, երկրորդ կյանքը չի լինելու», նրանց մտքում կրկին մարմնական հաճույքներն են: Հրեա ժողովուրդն այնպես բարձր է գնահատել նյութական ու մարմնավոր արժեքները, որ եգիպտական գերությունից ազատվելով ու դեպի Ավետյաց երկիր ուղորդվելով, նրանք չկարողացան դիմադրել տեսանելի կուռքի ու հենց կռապաշտության գայթակղությանը և իրենց ձեռքին եղած ոսկուց ձուլեցին ոսկե ցլիկ և սկսեցին երկրպագել նրան: Իսկ քրիստոնյաները ճիշտ ըմբռնեցին Քրիստոսի խոսքը, որ մարմնական կյանքը հոգով է լուսավորվում. «Մարմնի ճրագը աչքն է. եթե քո աչքը պարզ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի: Իսկ եթե քո աչքը պղտոր է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Եվ արդ, եթե քո մեջ եղած լույսը խավար է, ապա խավարը՝ որչա՛փ ևս ավելի» (Մատթեոս 5, 6): Միանգամայն հասկանալի է, որ վաղ շրջանի համայնքներում, հետևելով Հիսուս Քրիստոսի հորդորին, մտահոգվել են ոչ թե մարմնական պահանջմունքների ազդեցությամբ, այլ Աստծուց խնդրելով երկնային արքայություն:

Երրորդ աֆորիզմն ամփոփում է քրիստոնեական կենսակերպի կարևոր հատկանիշներից մեկը. ***«Նրանք ապրում են երկրի վրա, բայց դրախտի քաղաքացիներ են»:*** Պարզ է, որ խոսքը վերաբերում է վաղ շրջանի քրիստոնեական համայնքների անդամներին: Բայց արդյո՞ք նրանք բոլորն արժանի էին երկնային արքայությանն ու դրախտային կյանքին: Դրական պատասխանի հավանականությունը բավականին

բարձր է, քանի որ քրիստոնեական համայնքներին միանում էին դեպի Հիսուս Քրիստոսի հրաշագեղ ուսմունքը տածած սրտի մղումով և հոգու թելադրանքով: Ավելին, քանի որ քրիստոնեական համայնքները վաղ շրջանում ձևավորվում էին օտարության մեջ ու թշնամական հասարակական մթնոլորտում, քրիստոնեական համայնքին միացողը պետք է լիներ պատրաստ հանուն իր սիրո ու հավատի՝ առ Քրիստոս կրել անթիվ հետապնդումներ և ծանր տանջանքներ: Նման արտակարգ բնույթի «մարդկային նյութից» շատ-շատերը կարող էին իրենց խոսքով ու գործով արժանի լինել հոգու փրկության ու երկնային արքայության:

Չորրորդ աֆորիզմը նույնպես վերաբերում է քրիստոնեական ապրելակերպի էական բնութագրերին. ***«Նրանք ապրում են հասարակությունում ընդունված օրենքների համաձայն, բայց իրենց կյանքով գերազանցում են այդ օրենքները»:***

Արդյո՞ք զարմանալի է, որ Հիսուս Քրիստոսի պատվիրաններով ու բարոյական սկզբունքներով առաջնորդվող վաղ շրջանի քրիստոնեական համայնքների անդամ տղամարդիկ ու կանայք իրենց կյանքով գերազանցում էին այն երկրների օրենքները, որտեղ ձևավորվել ու բնակվել են իրենց համայնքները: Այս հռետորական հարցի պատասխանը կարող է լինել միայն բացասական, քանի որ վաղ շրջանի քրիստոնեական համայնքների անդամներն իրենց կյանքում ու գործունեությունում հետևում են Քրիստոսի վեհաշունչ պատվիրաններով: Ոչ միայն հունա-հռոմեական կոշտ ու դաժան օրենքների աշխարհում, այլ նույնիսկ արևմտյան ժողովրդավարության ժամանակակից զարգացած երկրների սոցիալ-բարոյական օրենքներն ու ավանդույթ-ները համեմատելի չեն քրիստոնեական փոխադարձ սիրո հիմնային սկզբունքի հետ: Վաղ շրջանի քրիստոնեական համայնքների անդամներն իրենց մարդասիրական վարքով ու վերաբերմունքով ոչ միայն իրենք առիթ չեն տվել հասարակությունում հաստատված ու գործող օրենքները խախտելու, այլ իրենց կենսակերպի օրինակով նրանք օժանդակել են օրինախախտումների և հանցագործությունների կախարգելմանը՝ այդ առումով ևս գերազանցելով երկրի օրենքները:

Հինգերորդ աֆորիզմը վերաբերում է քրիստոնեական սոցիալական բարոյականության ու կենսակերպի սկզբունքային առանձնահատկությանը. ***«Նրանք սիրում են բոլոր մարդկանց, բայց հետապնդվում են***

բոլորի կողմից»: Քրիստոնեական փոխադարձ սիրո և հոգատարության գաղափարը հսկայական թռիչք է մարդկության սոցիալ-բարոյական արժեքների զարգացման ողջ պատմությունում: Լինելով հեղափոխական, իր պատմական դարաշրջանի սոցիալ-բարոյական ավանդույթների տեսակետից արտասովոր գաղափար, քրիստոնեական փոխադարձ սիրո և հոգատարության Քրիստոսի կոչը համակեց և ոգևորեց նրա հեևորդներին, բայց հին կրոնաբարոյական պատկերացումների ազդեցության տակ գտնվող զանգվածների և, հատկապես, կրոնական առաջնորդների ու տեսաբանների կողմից այն ոչ միայն մերժվեց, այլ նրանց ներաշխարհում առաջացրեց նույնիսկ սուր և անհաշտ թշնամանքի զգացմունքներ ու վերաբերմունք:

Ժամանակակից արևմտյան զարգացած երկրների սոցիալ-բարոյական կյանքում նկատելի է արմատական հակասություն. Մի կողմից՝ ժամանակակից արևմտյան զարգացած երկրները կամ բացահայտորեն քրիստոնեական են, կամ էլ ունեն քրիստոնեական հավատի դարավոր ավանդույթներ: Մյուս կողմից՝ ժամանակակից արևմտյան զարգացած երկրների տնտեսական բնույթը հանգեցրել է այդ երկրներում հարստապաշտության ու անհատապաշտության այնպիսի աստիճանի, որը գրեթե ձևափոխվել է հարստամոլության ու անհատամոլության և արդյունքում հասարակությունում հաստատել ծայրահեղ անբարոյական արժեքներ ու վարք՝ քրիստոնեական կենսակերպի հակադիր բևեռը:

Վեցերորդ աֆորիզմի՝ ***«Նրանք աղքատ են, բայց շատերին դարձնում են հարուստ»,*** իմաստը բավականաչափ թափանցիկ է: Այո, վաղ շրջանի քրիստոնեական համայնքների անդամների գերիշխող մասը աղքատ ու նյութապես անապահով հասարակական շերտերի ներկայացուցիչներ էին, բայց իրենց համերաշխ ու մարդասիրական ապրելակերպով ու բարեսիրտ խոսքով նրանք բազմաթիվ մարդկանց հոգիներում սերմանել են Հիսուս Քրիստոսի սուրբ ուսմունքի սերմերը, որոնք էլ հետզհետե ծիլ են տվել և, ի վերջո, դարձել քրիստոնեական հավատի ամուր ծառեր, հավատի ու փրկության հույսի իրենց պտուղների անգնահատելի գանձերի հարստությամբ:

Ամփոփելով քրիստոնեական կենսակերպի որոշ նշանակալի ասպեկտները հարկ ենք համարում մեջբերել 20-րդ դարի սկզբի հայ ականավոր մտածող Գարեգին Չագալեանի միտքը. «Կան

հասարակական այնպիսի երևոյթներ, որոնք երկա՛ր տարիներ ու դարեր գոյություն են ունեցել, բայց որոնց կողքով մտածող մարդկութիւնանց է կացել տարիներ ու դարեր շարունակ, առանց կանգ առնելու նրանց վրայ, առանց ստորագծելու նրանց որովհետև այդ երեւոյթները միշտ համարուել են պարզ, ակներև, ինքնըստինքեան հասկանալի։

Նրանց էութեան, նրանց որակի, ծագման ու գոյութեան մասին կասկածներ երբէք չեն եղել, այդ պատճառով էլ գիտութիւնը կանգ չէ առել նրանց վրայ»[19]։

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվել է սոցիոլոգիայում լայն տարածում ունեցող և հասարակությունը նկարագրող «կենսակերպ» երևույթի տեսա-մեթոդական վերլուծությունը և ռուսալեզու մասնագիտական գրականությունում առկա ընդհանուր մոտեցումները։ «Կենսակերպ» հասկացության մեկնաբանման խնդրին հետամուտ՝ անդրադարձ է կատարվել վաղ քրիստոնյաների կենսակերպի էությանը և առանձնահատկություններին, հասարակության կողմից թշնամական վերաբերմունքի պատճառներին։

Բանալի բառեր. կենսակերպ, կենսառճ, քրիստոնեական կյանք, առաջին քրիստոնեական համայնքներ, հոգևորի առաջնայնությունը։

НЕКОТОРЫЕ ЗНАЧИМЫЕ АСПЕКТЫ «ХРИСТИАНСКОГО» ОБРАЗА ЖИЗНИ

Кочарян Нерсес

Магистр социологии

РЕЗЮМЕ

В статье представлен теоретико-методологический анализ широко распространенного в социологии и описывающего общество феномена “образа жизни” и общие подходы к нему в русскоязычной научной литературе. Следуя толкованию понятия “образ жизни”, автором характеризуется образ жизни раннехристианских общин, его особенности, структура и причины враждебного отношения общества к ним.

Ключевые слова: образ жизни, стиль жизни, христианский образ жизни, первые христианские общины, приоритет духовного.

---

[19]Մանրամասն տե՛ս ԽԱԺԱԿ Գ. Ի՞նչ է ազգութիւնը. Գիտական հետազոտութիւն, Կ. Պոլիս, 1912։

SOME SIGNIFICANT ASPECTS OF THE "CHRISTIAN" LIFEMODE

Nerses Kocharyan
MA of sociology

SUMMARY

The article presents a theoretical and methodological analysis of the phenomenon of "mode of life" widespread in sociology and describing society and general approaches to it in the Russian-language scientific literature. Aiming to interpretate the concept of "mode of life", the early Christian way of life, its features, structure and reasons for the hostile attitude of society towards the early Christian communities are characterized.

Key words: way of life, lifestyle, Christian life, the first Christian communities, the priority of the spiritual.